

ԱՅԵՇԱԽԱՄԱՆ ԱՅԵՎԱՐԵՒ

ԵՒ ԾՆՈՒՆԴ ԱՍՏՈՒԱԾՈՑ

Եսիոդոս հին յոյն բանաստեղծն այսպէս կը պատմէ իւր Աստուածոց ծննդոց գրոց մէջ սկիզբն աշխարհի և դից ծնունդը : —

Ամենէն առաջ, կ'ըսէ նա, եղաւ ֆառոս. ապա ել երեեցաւ երկիր՝ յակիտենական հիմն տիեզերաց, Տարտարոս՝ խաւարչուտ անդունքք երկրի, և Սէր՝ գեղեցիկն յանմահից՝ բռնակալն աստուածոց և մարդկան : —

Երկիրն նախ ծնաւ զերկինս, որոյ ամառեղազարդ կամարն աստուածոց պալատ պիտի ըլլայ: Նա ծնաւ բարձր լեռներն, որոնց դալարազարդ հովանաւոր հովտաց մէջ կը բնակին թաւերժհարսունք: Նա ծնաւ դարձեալ զծովը միայն իւր զօրութեամբ, որոյ անդունքք հուն չունին և ալիքն աննրկունք են :

Երկիր միայն կեանք տուաւ կիկլոպայց ևս, Յրոնտէսի, Ստերոպի և Արգէսի, որ ուժոյ և յանդգնութեան հրէշներն են: Սակաւիկ մի յի տոյ Արամազդայ կայծակներն դարբնեցին սոքա: Սակայն նման միւս աստուածոց մի միայն աշք ունէին, որ մեծ շրջանակի նման կը բացուէր նոցա ճակտին վրայ:

Երկիրն երկնից հետ ամուսնանալով ծնաւ զ՛լվկիան, զկրես, զկես, զչիպերինն, Յարեթ, Ռէս, Թէմիս, Մնեմոսիոս, Փերսոս, Թետիս և Կոռնոս կամ Սատուանոս: Մոքա են տիտանք:

Երկիր և երկինք ծնան երեք ուրիշ որդիկ ալ. կողոս, Պրիարես և կիաս: Վայրագ գազանութիւն մ' ունէին սոքա և հսկայ հասակ. նոցա լայն ուսոց վրայ յիսուն սպառնալից զլուխներ կային, հարիւր բազուկներ կը կախուէին մարմնոյն չորս կողմն, աշխատութեամբ պնդացած, ուժեղ էին, բռնաւոր և վայրագ, գազան քան զամենայն որդիս երկնի և երկրի:

Սատուանոսի պատմութեան մէջ պիտի տեսնանք թէ երկրի և երկնից որդիկ ինչպէս վարուեցան իւբեանց Հօրը հետաւ

Աշխարհի առաջին դարերն: — Երկաթէ դարէն առաջ, ուսկից կը սկսի մարդկութեան թշուառութեանց և եղերանց պատմութիւնը, երկրիս վրայ չորս այլեայլ ցեղեր երեցեր էին:

Աստուածք նախ սոկեդարուն մարդիկ երեցուցին: Այս մարդիկ Սատուանոսի կառավարութեան ներքեւ կ'ապրէին աստուածոց պէս՝ ազատ պատերազմներէ. ՚ի հիւանդութեանց և յեղերանց. ծերութիւնը նոցա մարմնոյն կորովն չէր վատներ, ուրախ խնճոյից ետեէ կ'ըլլային՝ առանց անժուժկալութեան: Մահը նոցա, համար քազցր

քուն մոէր, և կեանքն՝ ամենայն բարեաց վայելումն. Առանց մշակութեան արդինաւորեալ երկրին հարստութիւններն կը բաժնուէին հաւասար չափով ամէն իւր բնակչաց:

Այս մենաշնորհ ցեղն անցաւ մարեցաւ. ցեղ կազմող բոլոր անդամներն իշան ի ծոց երկրի, և մարդկութեան պաշտպան ոգիներ եղան (թերափէ):

Ոլիմբիաբնակ աստուածք ստեղծեցին արծաթի գարուն ցեղն, շատ ստորին քան զառաջինն. Երկրի այս նոր բնակչաց մանկութիւնը հարիւր տարի կը տեսէր: Նոցա մայրերուն դիրդ և մեղկ խնամքն անոնց հոգին և մարմինը կը թուլցնէր և կը մեղկացնէր. Երբ նորա այրական հասակը կը հասնէին, հաճոյից և հեշտութեանց մէջ կ'ընկըզմէին: Աստուածոց ծառայել և զնոսա պաշտելը կը մոռնային: — Արամազդ հանեց զնոսա երկրին ծոցէն և եղան նոքա երկրաւոր ոգիներ ստոր քան ոսկեդարու ցեղին ոգիներն:

Արամազդ վերջէն պղնձի զարուն ցեղն ստեղծեց: Բուռն, կորովի և միշտ պատերազմ ընող մարդիկ էին: Ցորեն բնաւ չէին ուտեր, պղնձէ սրտեր ունէին, վայրագութիւն մը և անընկճելի զօրութիւն: Զէնքերնին պղինձ, տուներնին պղինձ, բոլոր գործերնին պղինձ, իրենց բռնութեանց զոհ լինելով իշին ի դժոխս:

Երբ այս ցեղն ոչնչացաւ, Արամազդ նոցա տեղ ստեղծեց դիւցազանց արդար և արմուն ցեղն: Մեծ մասն թերեի պարսպաց և Տըրոյիոց պաշարման մէջ կեանքերնին կորուսին արինահեղ պատերազմաց մէջ, բոլորն ալ չմեռան. Հոչակաւորքն մարդկան բնակակցութենէ զատուեցան և երկրիս ծայրը խրկուեցան, աշխարհի մը մէջ ուր կը տիրէ լիութիւն և երջանկութիւն:

Կը յաջորդէ երկաթի զարն յիւցազանց զարերուն և կը տեսէ անընդհատ մինչեւ մեր օրերը:

Այս պատմութիւնս խորիմաստ գաս մը կը պարունակէ: Արծաթի զարն ոսկեդարուն յաջորդելով կը ցուցնէ որ երջանկութիւնն անխառընէ մեղկութիւնն կը սորվեցնէ և զլաստուած մոռնալ կուտայ. և թէ, նախախնամութիւնը իմաստութեամբ կենաց մէջ հաճոյին և ցաւն իրարու հետ խառներէ, որպէս զի մարդն չթուլայ հեշտութեան թըմքիւներով:

Պղնձէ դարուն ետևէն դիւցազանց դարն յաջորդելով մեզ կը սորվեցնէ թէ վայրագութիւնը մէկրի դնելով և քաղցրանալով դիւցազնութիւն յառաջ կը բերէ, որ է հոգւոյ և մարմնոյ ուժը չափաւորել մարդկութեամբ:

Այս հին և գեղեցիկ աւանդութեան տեղը հետագայ ժամանակաց բանաստեղծք անցուցին չորս իրար յաջորդող դարուց առասպելն, զար ոսկեոյ, արծաթոյ, պղնձի և երկաթոյ, որ մարդկային ցեղից անընդհատ աստիճանաբար անող անկումն կը բացատրէ: Մենք նախ-

Նի աւանդութիւնը իւր վեհ պարզութեան մէջ պահեցինք :

Բայց ըստ Ավիդեայ՝ տանք այս չորս գարուց նկարագիրն Առաջինն է ոսկեգարն, յորում տուաքինութիւնը աճեցաւ առանց օրինաց, Մարդիկ կը հնագանդէին յօժարութեամբ իւրեանց սրտի մէջ զրուած օրինացն, և երբեք չէին թողուր այն տեղն ուր ծներ էին, Միշտի իւազաղութեան էին. պարսպապատքաղաք չկար և ոչ պատերազմի զէնք. և որովհետեւ երկիր ինքնին առատ պտուղ կու տար, ուրիշ անունդ չէին փնտուեր: Կաթի և նեկտարի առուակներն նոցա անուշահամ ըմպելիքներ կը մատակարարէին: Երկինք՝ միշտ պարզ, օդն ինկարոյր՝ ծաղկանց հոտերով, և եղանակներէն գարունն միայն էր: Երջանկութեան և անմեղութեան այս գարը կունոսի թագաւորութեան չափ տեսեց: Արամազդայ ատեն սկսաւ արծաթի դարձն: Գարունն սակաւատեւ եղաւ և տարին չորս եղանակի բաժնուեցաւ. առաջին անգամ տաքն այրեց երկիրն, որ ցրտէն ալ սառեցաւ: Մարդիկ խրճիթներ շինեցին և իւրեանց քրտամբ երկրէն հանեցին դեմետրեայ պարզեներն: Պղընձէ գարուն մէջ երան գոռողութիւն և պատերազմ առանց եղերան: Վերջապէս երկաթի դարն հալածեց զպարկեշտութիւն և զարդարութիւն. որոր մոլութիւններն գուրս ժայթքեցին ամէն կրքերով և ախտերով մէկտեղ, և օրինաց խըստութիւնը սկսաւ պատճել ամէն տեսակ եղեան: Մարդկան ցեղ մը՝ հսկայից արենէն ծնած, որով երկիրը ողողեցաւ երբ այս հրէշներն յաղթուեցան աստուածներէն, խառնեց ամբարդտութիւնը մարդկային ցեղին ապականութեան հետ:

Քաղեալ 'ի Դիցարանուերեն

Շարունակելի

Հ. ՆԵՐՍԻԾ Վ. ՃՆՏՈՑՆԱՆ

ՊԱՏԿԵՐ

ՏԱՐԻՈՅՆ ԵՐԿՈՒ ԵՂԱՄՆԱԿՈՅՑ



Զըմեռը հասաւ խորշոմեալ դէմքով
Գըլուխը ճերմակ, երկան մազերով,
Տարտոյն էն դաժան անշուշտ ամենուն
Եղանակն է այս, մեծի և փոքուն:
Հողագունտն անգամ կը խորչի հիմէն
Մնաշառ և խիստ անոր ժանիքէն.
Չունի բարենկամ, բրնաւ ջատագով,
Անհամբոյր բարբէն ամէն մարդ տըժգոհ:
Կանաչ գաշտերուն երջանիկ կեանքը